ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ 34

12.12.2014թ.

2015ԹՎԱԿԱՆԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, ,, Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով.

ԱԿԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել 2014թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. << Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի շինությունների /ներառյալ ոչ հիմնական շինարարության/ տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

Հիմնական օբյեկտների համար

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,, այդ թվում այգեգործական /ամառանոցային տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 /հինգ հազար/ դրամ:

2/ սույն կետի ,,ա'' ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10.000 /տաս հազար/ դրամ:

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար / դրամ:

գ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 / տասնհինգ հազար / դրամ:

դ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000 /երեսուն հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1000 /մեկ հազար/ դրամ:

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման

աշխատանքների /բացառությամբ << Օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն մինչև 3000 /երեք հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառված է 0.3 գործակիցը

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հինական և ոչ հինական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 20 /քսան / դրամ մեկ քառակուսի մետրի համար:

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

3/Խանութներում, կրպակներում տեխնիկականկ հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում 20.000/ քսան հազար / դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, զվարճանքի օբյեկտները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար ընթացիք տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար 25.000 /քսանհինգ հազար/ դրամ:

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50.000 /հիսուն հազար/ դրամ:

3/ բաղնիքների /սաունաների/ համար 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ:

4/ խաղատների կազմակերպման համար 500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

5/ շահումներով խաղերի կազմակերպման համար 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

6/ վիճակախաղերի կազմակերպման համար 100.000 /հարյուր հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1000 /մեկ հազար/ դրամ:

2/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3/ այլ արտաքին գովազդի համար 1000 /մեկ հազար/ դրամ:

4/ համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սահմանել 700 /յոթ հարյուր/ դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար ընթացիք տարում 3000 /երեք հազար/ դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները

1/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10.000 /տաս հազար/ դրամ:

2/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 /երեք հազար/ դրամ:

3/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 /երեք հազար/ դրամ:

4/ Արմաշ համայքում սահմանել աղբահանության վճար մեկ շնչի հաշվով ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ:

Ավագանու անդամներ /ստորագրություններ կողմ,դեմ,ձեռնպահ,նշելով բոլորի անուն,ազգանունները,ներառյալ բացակաները/

Կողմ – 6 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. Ս. Աղամյան
2. Ռ. Ջեյնալյան
3. Բ. Շահնազարյան
4. Մ. Շահվերդյան
5. Ք. Մկիտումյան
6. Յ. Պետրոսյան

Համայնքի ղեկավար _____ Հ.ՋԵՅՆԱԼՅԱՆ

/ստորագրություն/ /անուն, ազգանուն/